ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արագածոտնի մարզի «Աշնակի Գ. Չաուշի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «ՆԶՊ» առարկայի ուսուցչի թափուր տեղի համար։

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի։

Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի։

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին։

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- ✓ Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- ✓ Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- ✓ Անձը հաստատող փաստաթուղթ,
- ✓ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ✓ Ինքնակենսագրություն (Ձև 5),
- ✓ Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
- ✓ ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ զինվորական գրքույկ,
- ✓ Հրապարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթերը (առկայության դեպքում),
- ✓ Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ։

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում։

Եթե ներկայացրած փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք։

Փաստաթղթերն ընդունվում են ՀՀ ԿԳՄՄՆ կայքէջում հայտարարությունը հրապարակելու օրվանից մինչև փետրվարի 14-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից։

Մրցույթը տեղի կունենա փետրվարի 20-ին՝ ժամը 14:30-ին, ՀՀ Արագածոտնի մարզի «Աշնակի Գ. Չաուշի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցեն ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Աշնակ, Վ. Իսրայելյան 15։

Տեղեկությունների համար զանգահարել՝ +(374)94070744 և +(374)98168444 հեռախոսահամարներով։